

**Տ. ԱՐԱՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՇԵԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՕՍՈՒԱԾ՝
Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(22 սեպտեմբերի, 2013 թ.)**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զի գիտացես թէ որպէս պարտ իցէ քեզ ի տան Աստուծոյ շրջել,
որ է Եկեղեցի Աստուծոյ Կենդանոյ, Սիւն
եւ Հաստատութիւն ճշմարտութեան»
(Ա. Տիմ. Գ. 16):

Պօղոս Առաքեալ իր Տիմոթէոս աշակերտին ուղղած առաջին նամակին մէջ ունի կարեւոր թելադրութիւններ, որոնք կենսական են ի մասնաւորի Եկեղեցւոյ ծառայութեան եւ առաջնորդութեան կոչուածներու, եւ ինչո՞ւ չէ, նաեւ հաւատացեալներու համար ընդհանրապէս: Պօղոս Առաքեալն իր իսկ կեանքի օրինակով ցոյց տուած է, թէ ան հաւատարիմ էր այն «ողջմիտ վարդապետութեան, որ կը համապատասխաներ երանելի Աստուծոյ փառքի Աւետարանին»: Կու տայ երախտագիտութեան օրինակը, վայելած ըլլալով Աստուծոյ ձրի պարգեւները: Կը խոստովանի, թէ Յիսուս Քրիստոս իր մէջ ցոյց տուած է համբերատարութիւնը, իբրեւ օրինակ՝ բոլոր անոնց, որոնք պիտի հաւատան Փրկչին, յաւիտենական կեանքի յոյսով: Կը շեշտէ յատկապէս «առանց բարկութեան եւ վիճելու մարմաջի» կատարուած աղօթքի կարեւորութիւնը: Մի առ մի կը թուէ եպիսկոպոս եւ սարկաւագներու արժանիքները: Տարսնացի Առաքեալը կը բացայայտէ, թէ ի՞նչ նպատակով գրի առած է սոյն հովուական նամակը, ըսելով. «...դուն կը գիտնաս, թէ ինչպէս պէտք է վարուիս Աստուծոյ տան մէջ, որ կենդանի Աստուծոյ եկեղեցին է՝ սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան»:

Այս սուրբ պահուն առաջի Սրբոյ Սեղանոյ հաւաքուած ենք, ընդ նախագահութեան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ եպիսկոպոսներու մասնակցութեամբ, միասնաբար աղօթելու եւ մեր աղօթքներով երկինքը շարժելու, Աստուծոյ Ս. Հոգւոյն առաջնորդութեան ակնկալութեամբ:

Մեծ կամ փոքր, ամէն հաստատութեան կամ կազմակերպութեան առաքելութիւնը կարելի կ'ըլլայ հասկնալ միայն իրենց ծագման ու զարգացման պարագաներու յայտնաբերումով: Նման անհատներու, անոնք ալ ունին իրենց կենսագրութիւնը ու նկարագիրը, որոնցմով իրենց արժանի տեղը կը գրաւեն պատմութեան մէջ:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ դերն ու արժեքը հասկնալու համար, պէտք է անոր ծագման կամ գոյութեան ընթացքը, պարագաները

վերլուծության ենթարկել, որպես զի կարելի ըլլայ թափանցել անոր էության ու առանձնայատկություններուն, լուսագոյնս ըմբռնելու՝ անոր խօսուն վկայութիւնը:

Ս. Թաղեոս եւ Ս. Բարթողիմէոս առաքեալներու քարոզութեամբ Հայոց հողին վրայ հաստատուած Առաքելական Եկեղեցին, ամրացաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի ճգնութեամբ, աղօթքներով ու առաքելաշաւիղ գործունէութեամբ: Նախալուսաւորիչեան շրջանը եւս եղաւ քրիստոնէական վկայութեան շրջան մը, իր եպիսկոպոսներով ու հոգեւոր սպասաւորներով եւ ի Քրիստոս հաւատացեալներով: Եկեղեցական պատմութենէն կը ստրվինք անոնց վաստակը քրիստոնէութեան քարոզութեան եւ Աւետարանի տարածման ուղղութեամբ: Առանց այդ բոլորին, պիտի չկարենայինք հասկնալ մեր Հաւատքի Հօր ձեռքբերած յաջողութիւնը, որով Հայ ժողովուրդը պատմութեան բեմին վրայ եղաւ առաջինը, քրիստոնէութիւնը իբրեւ պետական կրօնը յայտարարելու հանգամանքով:

Պատմական իրողութեանց առնթեր ազգային եկեղեցական գողտրիկ աւանդութիւն մը կու գայ Հայոց հողը կապել մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Այդ աւանդութեան համաձայն Յիսուսի ծննդեան երկրպագու Արեւելքի մոգերը կը նկատուին «Մոգուց կամ Մոկաց աշխարհէն», որոնցմէ Ս. Գասպարի գերեզմանը ցոյց կը տրուէր Մոկս աւանին Ակնդաշտայ Վանքին մէջ: Այս գողտրիկ աւանդութիւնը Աստուածայայտութեան սկանառես մոգերուն կը վերագրէ աստուածային յայտնութեան աւետիսը բերելու պատիւը:

Այս բոլորով միատեղ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ամէնուս համար պանծալի հաստատութիւն մըն է, իր աւանդութիւններով ու աստուածային եւ հաստատուն հիմներով: Այս եկեղեցին, որ դարերէ ի վեր անսասան կերպով կը շարունակէ պահել իր գոյութիւնը, իր ժողովուրդին տառապալից օրերուն եղած է լուսատու փարոս, փրկութեան լաստ, միութեան ոյժ՝ բոլոր խաւերուն համար, գորովագութ մայր եւ վերջապէս դրօշակիրը՝ խղճի ազատութեան: Իրաւ է, թէ եկեղեցին ունեցած է խնդիրներ եւ մանաւանդ՝ անմիջական լուծման կարօտ հարցեր: Սակայն եկեղեցւոյ հարցերը կարելի չէ լուծել անհատական միջոցառումներով, այլ՝ հետեւելով առաքելական եւ յետագայ դարերու աւանդութեան՝ ժողովներով եւ Աստուծոյ Ս. Հոգիին առաջնորդութեան դիմելով: Եկեղեցւոյ հարցերը դարեր շարունակ առատ նիւթ հայթայթած են բոլոր անոնց, որոնք ըսի-ըսաւներով կը փորձեն իրենց հեղինակութիւնը պարտադրել: Եկեղեցին ունի իր սիւները. ճշմարտութիւնն ու հաստատութիւնը, որոնք կը մնան աներբ:

Հակառակ այս իրողութեան, Եկեղեցւոյ դէմ խօսիլը ու անոր դէմ պայքարիլը կարծէք նորելուկ սովորութիւն մը դարձած է մեր ժողովուրդի կարգ մը խաւերուն մէջ: Սակայն Եկեղեցին անարգողներ պէտք է գիտնան թէ՛ կենցաղական ու ընկերային բոլոր առաւելութիւնները, զիր, գրականութիւն եւ մանաւանդ իր լեզուով աղօթելու առանձնաշնորհում, բոլորը պարգեւներն են Եկեղեցւոյ, որ տարփողած է նաեւ

խղճի ազատության սկզբունքները: Եկեղեցին, միակ շաղկապը աշխարհացրի հայորդիներուն, փորձած է իր կարելին ընել պահպանելու ազգային-եկեղեցական միությունը եւ ապահովելու ազգին զաւակներուն գոյատեւումը, ձեռք առնելով ամեն տեսակի գործնական միջոցներ, յաճախ թիավարելով հոսանքն ի վեր:

Ինչպէս ամեն հաստատութիւն, Եկեղեցին ալ իր կազմութենէն սկսեալ մինչեւ ցայսօր ունեցած է հակառակորդներ: Կը կարծուի թէ անհաւատութեան ծաւալումով Եկեղեցին վտանգուած պիտի ըլլայ: Պատմական իրողութիւն է, թէ առաջին իսկ մէկ օրէն Եկեղեցին իր դէմը ունեցաւ անհաւատներ, թերահաւատներ, հերետիկոսներ, որոնք աշխատեցան Եկեղեցին հիմնայատակ քանդել, սակայն չկրցան յաջողիլ երբեք: Դարերէ ի վեր քաղաքական իշխանութենէ զրկուած Հայ ազգը, փարած է իր Եկեղեցիին որուն շնորհիւ ապահոված՝ իր գոյութիւնը: Եկեղեցին եղած է հոգեւոր հայրենիք մը, եղբայրասիրութիւն ներշնչող վայր մը: Ո՛ր կրնանք մենք զմեզ ապահով զգալ, ո՛ր կրնանք մեր նախահարց խօսքերը լսել, ո՛ր կրնանք Աստուծոյ օրհնութիւնը ստանալ, եթէ ոչ եկեղեցւոյ մէջ: Որովհետեւ եկեղեցին կը վերացնէ մարդուն հոգին առ Աստուած, ի տարբերութիւն ուրիշ վայրերու: Հաւատացեալներ ըմբռնած են աղօթքի կարեւորութիւնը եւ առանց ձանձրանալու աղօթելու Փրկչական հրամայականը: Իրաւ է, թէ կարելի է աղօթել ամենուրեք, սակայն տարբեր է եկեղեցւոյ մէջ աղօթելու զգացումը. Աստուծոյ Ս. Սեղանին առջեւ հաւատակից եղբայրներու եւ քոյրերու ի հաւատս միասնականութիւնը կ'աւելցնէ ու կը զօրացնէ հաւատացեալի եռանդը ու տրամադրութիւնը, բանալու իր սիրտը Երկնաւոր Հօր: Կեանքի պայմանները իրենց դրական եւ ժխտական երեսակներով, կու գան ազդել մարդու հոգեւոր կեանքին վրայ: Յաճախ վիշտն ու տառապանքը, ձախողութիւնները, դժբախտութիւնները առիթներ կ'ըլլան, որ մարդը դառնայ իր Արարչին. առաւել եւս ազնուացած, նաեւ տալով իրաւ հաւատացեալի մը տիպարը:

Եկեղեցւոյ հետ առնչուած հարցեր ծագում կ'առնեն նաեւ ազատամտութեան սխալ մեկնաբանութենէն: Ոմանք ազատամտութիւնը կ'ընկալեն որպէս վտանգ եւ այդ պատճառով ալ բարեպաշտ մարդիկ միշտ կ'ուզեն Եկեղեցին վարել պահպանողական կեցուածք մը որդեգրելով: Պէտք է ի մտի ունենալ, թէ ամեն գաղափար որ ճշմարտութեան վրայ հիմնուած է՝ վտանգ չի բերեր: Սակայն անզգոյշ մարդիկ, որոնք ազատամտութիւնը կ'ընկալեն թեթեւութեամբ, զայն կ'օգտագործեն Եկեղեցին, եկեղեցականութիւնը եւ հաւատացեալը ոչ-շինարար ոգիով քննադատելու: Իսկութեան մէջ անոնք կը քարկոծեն իրենց ապագան, մատնուած՝ վրան նստած ծառի ճիւղը կտրող անխորհուրդ մարդու վիճակին: Եկեղեցին նախապաշարում ու անելորդապաշտութիւն չընդունիր. քանի որ իր ազատամտութեան ըմբռնումը հիմնուած է ճշմարտութեան վրայ:

Ոմանք կը փորձեն հարցեր ստեղծել գիտութիւնը ու Եկեղեցին իբրեւ թէ իրարու հակադրուած ցոյց տալով: Իրաւ է, թէ Եկեղեցւոյ եւ գիտութեան ծառայութեան

դաշտերը տարբեր են իրարմե, սակայն եւ այնպէս անոնք իսկութեան մէջ զիրար կը լրացնեն, առաջինը կը զբաղի մարդուն հոգւոյն, իսկ երկրորդը՝ մտքին առողջ զարգացման հետ: Երկուքն ալ օրհնութիւն ու շնորհք են մարդկութեան համար, այդ պատճառով է որ մեր նախնիները այս հասկացողութեամբ իւրաքանչիւր եկեղեցիի քով հիմնած են դպրոց մը:

Ըստ իտալացի պետական մարդ Գաւուրի սկզբունքին՝ «ազատ Եկեղեցի ազատ պետութեան մէջ» պէտք է ըլլայ: Եկեղեցին պէտք չէ ուծանայ եւ կորսնցնէ իր կրօնական եւ հոգեւոր սրբութիւնը, զանոնք զոհելով քաղաքական գերիշխանութեան կամքին: Եկեղեցին ծլած ու ծաղկած է այն ժամանակ, երբ քաղաքական իշխանութիւնը եւ Եկեղեցին քալած են իրարու զուգահեռ: Եկեղեցին պէտք չէ շեղի իր առաքելութենէն եւ ուղղութենէն: Եկեղեցին երբ ինք իր մէջ ազատ է եւ կատարեալ ազատութեամբ կը վարէ Եկեղեցւոյ գործերը, նաեւ Եկեղեցին ազատ թողուած կ'ըլլայ իր ծոցէն բխած հոգեւոր իշխանութեամբ կառավարուելու տեսակէտէն, շատ աւելի արդիւնաբեր ծառայութիւն կ'ունենայ:

Եկեղեցւոյ անկումը զգալիօրէն կը յայտնուի այն ատեն, երբ աշխարհիկը կը գերադասուի, փոխանակ գերադասելու՝ հոգեւորը: Եկեղեցւոյ հոգեւոր իշխանութիւնը հաստատուած է Ս. Գիրքի, առաքելական կանոններու, տիեզերական ժողովներու, ինչպէս նաեւ օրինական ժողովներու որոշումներու հիման վրայ: Իր գործունէութեան դաշտը մշակին կը պարտադրէ հաստատուած ըլլալ «հաւատքի» վրայ: Իսկ պետութիւնը կը մարմնաւորէ աշխարհիկ իշխանութիւնը, հաստատուած՝ սահմանադրութեանց եւ օրէնքներու վրայ: Երկու իշխանութեանց փոխադարձ յարգանքին մէջ կը կայանայ առողջ գործելակերպի սկզբունքը: Հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութեանց բաժանումը ուսած ենք Ս. Աւետարանէն: Քրիստոս կ'ըսէ. «Իմ թագաւորութիւնս չէ յայսմ աշխարհէ», նաեւ կ'ուսուցանէ «տալ զկայսերն կայսեր եւ Աստուծոյն Աստուծոյ»:

Յովհաննէս Աւետարանիչ կը յիշեցնէ, թէ սիրոյ գերագոյն օրինակը տուած է նոյնինքն Աստուած, Իր Միածին Որդին աշխարհ դրկելով, մեր մեղքերու թողութեան համար: Ապա կը թելադրէ ըսելով. «Եթէ Աստուած այսպէս սիրեց մեզ՝ ուրեմն մենք ալ պարտինք զիրար սիրել» (Ա. Յովհ. Դ. 7-11): Աստուածսիրութիւնն ու մարդասիրութիւնը Եկեղեցիին ոյժը կը կազմեն: Աստուած սիրողը, ամէն ինչ կ'ընէ բացի չարութենէ: Իսկ մարդասիրութիւնը ինքնին կը բանայ բարեգործութեան դուռը: Ուստի Եկեղեցւոյ առաքելութիւնը յաջողութեան հունին մէջ կը մնայ, այնքան ատեն որքան սէրը կը թագաւորէ մարդոց սրտերէն ներս: Եկեղեցին մինչեւ այսօր կանգուն մնացած է, իր առաքելութիւնը շարունակած է այս ճշմարիտ ու աստուածային սուրբ սիրոյ զգացումին ներկայութեամբ: Պօղոս Առաքեալ քրիստոնէական հաւատքի երեք հիմնական սկզբունքերը՝ հաւատքը, յոյսը եւ սէրը թուելէ յետոյ կը շեշտէ. «բայց ասոնցմէ մեծը սէրն է» (Ա. Կորնթ. ԺԳ. 13): Եկեղեցւոյ, սիրով առջցուն

առաքելությունը կը զօրանայ սրբոց բարեխօսութեամբ եւ դաւանական միութեամբ: Եկեղեցին որքան աւելն օր ունի քրիստոնէական աստուածային սուրբ սերը, չկործանիր: Եկեղեցին մէկ բան միայն կրնայ սպառնալ. սիրոյ պակասը, որ կու գայ իր կողքին հրաւիրել անմիաբանությունը, նախանձը, ատելությունը, անգգամությունը: Ոչ ժողովուրդի մտաւորական զարգացման յատկանիշները, ոչ ալ հոգեւոր պաշտօնէի մը պերճախօսությունը օգուտ պիտի ունենար Եկեղեցւոյ շինութեան եւ անհատներու միխթարութեան համար, եթէ սերը բացակայէր: Որովհետեւ Եկեղեցին պիտի վերածուէր պղինձի եւ ծնծղայի, որոնք կը հնչեն եւ կը դողանջեն (Ա. Կորնթ. ԺԳ. 1): Այդ պարագային Եկեղեցին կը մատնուի ողբալի կացութեան:

Հայ Եկեղեցին Քոյր եկեղեցիներէն կը տարբերի իւրայատուկ անցեալով, իր կազմակերպութեամբ ու դաւանաբանական առանձնայատկութիւններով: Հայաստանեայց Եկեղեցի կամ Հայոց Եկեղեցի անունը, նոյնիքն կ'արտայայտէ անոր էությունը: Հայաստանեայց Եկեղեցին իր վրայ պահելով հանդերձ ընդհանրական ըլլալու հանգամանքը, շաղախուած է մեր ժողովուրդին հետ, անոր լեզուով, գրականութեամբ, արուեստով եւ հայացած՝ անկողոպտելի արժէքներով: Եւ այս առումով ալ անբակտելիօրէն կապուած է մեր ժողովուրդին:

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին զօրութիւն ունի գօտեպնդելու մեր ժողովուրդի զաւակները, եթէ անոնք ունենան ականջ՝ լսելու: Ան ապահով նաւն է, որով կրնանք մերօրեայ ալեկոծութեանց ընդմէջէն անվնաս հասնիլ խաղաղութեան նաւահանգիստը: Մեր ժողովուրդի զաւակները պէտք է լաւ ըմբռնեն, թէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ծնունդ առած է մեր ազգի ծոցին մէջ ու սերունդէ սերունդ աւանդուած՝ իբրեւ ամենաթանկագին ժառանգութիւն:

Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ սիրելի զաւակները, անշուշտ, աւելի պիտի սիրեն իրենց Եկեղեցին, երբ աւելի մօտէն ճանչնան անոր հոգին, անոր կանոնները, անոր իսկությունը, որոնց մէջ յայտնապէս կը փայլին քրիստոնէութեան հնաւանդ սկզբունքները: Հայոց Եկեղեցին եղած է աղբիւրը հայ ժողովուրդի կրօնական, բարոյական ապրումներուն ու առաքինութիւններուն: Ս. Էջմիածինը, Լուսաւորիչներու, Ներսէսներու, Սահակ-Մեսրոպներու, Նարեկացիներու եւ Շնորհալիներու շունչով ոգեղինացած է: Քրիստոնէական այս մեծ եկեղեցին՝ արժանապէս իր գոյութիւնը պահած է աւելի քան 1700 տարիներ, ու կը պահէ տակաւին եւ պիտի պահէ յաւիտեան: Տասնեւօթը դարեր արդէն իսկ անցած են այն օրէն, երբ Միածին Որդին հայուն Մայր հողին վրայ իջաւ, ոսկի ուռը ձեռքին, ցոյց տալով իր փոքրիկ հօտին՝ Հայ ազգի նկատմամբ ունեցած յատուկ սէրը: Աստուածային իր զօրութեամբ «հալածեց սանդարամետականներու գունդը եւ լուսակերտելով հաստատեց Ս. Էջմիածինը, որպէս շտեմարան աստուածային անսպառելի շնորհներու եւ ծնող, դաստիարակ եւ կատարելագործիչ ամենայն եկեղեցեացս Հայաստանեայց»:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարը կառուցուած է սանդարամետի մեհեանին վրայ, իբրեւ

կենդանի ցուցիչը Քրիստոսի տարած յաղթանակին: Այս անյեղի ճշմարտությունը բարձրադպրակ կը գոչէ Հայ ժողովուրդին, զայն հրաիրելով տէր կանգնիլ Եկեղեցւոյ, որուն հիմը անասական է, իսկ կառուցման շինանիւթը՝ Աստուածային լոյսն ու սէրը:

Այս Սուրբ Աթոռին վրայ բազմած մեր բոլոր սրբազան հայրապետները աշխատած են իրենց հօտին համար, դառնալով քրիստոնէական դաստիարակիչներ, ժողովուրդի հայրեր, իրենց խնամքին յանձնուած բանաւոր հօտին պաշտպաններ ընդդէմ արտաքին կործանարար հոսանաց: Անոնք իրենց ուշադրութիւնը ընդհանրապէս կեդրոնացուցած են տառապած ժողովուրդին վրայ, որ իր կեանքի ամբողջ տեսողութեանն ընթացքին արդարեւ եղած է խաչակիր, բարձր պահելով Խաչին եւ Խաչեալին պատիւը:

Տէր Աստուած, անասա՛ն պահէ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, իր նուիրապետական աթոռներով ու անոնց գահակալներով, սրբազան եպիսկոպոսներով, վարդապետներով ու քահանաներով, սարկաւազաց եւ դպրաց դասերով ու համայն հաւատացեալ ժողովուրդով: Թող միութեան ոգին եւ զայն կեանքի վերածելու կամքը անպակաս ըլլայ մեր ժողովուրդէն, գլխաւորութեամբը՝ Տիրոջ Սեղանը բանալու եւ Կեանքի Խօսքը քարոզելու եւ առաջնորդելու կոչուած ծառայողներու:

«Թագաւո՛ր երկնաւոր, զեկեղեցի քո անշա՛րժ պահեա, եւ զերկրպագուս անուանդ քում պահեա՛ ի խաղաղութեան», այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն: